

Արձանագրություն 8

2014 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության 2013-2014 ուստարվա հաշվետվությունը և 2014- 2015 ուստարվա գործունեության ռազմավարական ուղղությունները:

/զեկ՝ ԱՔՎ վարչության պետ Ա. Ղարիբյան

/

2.ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2013-2014 ուստարվա հաշվետվությունը և 2014-2015 ուստարվա գործունեության ռազմավարական ուղղությունները:

/զեկ՝ բաժնի պետ Պ. Մուրադյան /

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցեց ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ա. Ղարիբյանը: Ձեկուցողը ներկայացրեց այն աշխատանքները, որոնք կատարվել են ԱՔՎ-ի կողմից գործունեության տարբեր ոլորտներում: Նշվեց, որ ակտիվ աշխատանքներ են տարվել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների կատարման ընթացքի, լսարանային ֆոնդի ստուգման, տվյալների բազայի մշակման, ժամավճարով աշխատողների հաշվառման, մագիստրատուրայի և երկրորդ մասնագիտությամբ ընդունելության կազմակերպման ուղղություններով: Ներկայացվողին մանրամասն տվյալներ ուսանողական համակազմի շարժի, հեռացված և այլ բուհերից տեղափոխվածների, տարբեր ծրագրերում ընդգրկված դասախոսների և ուսանողների, պրակտիկաների անցկացման, ուսանողների վարձավճարների զեղչերի, կրթաթոշակների, վերապատրաստումների և հարակից այլ հարցերի վերաբերյալ: ԱՔՎ-ի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգը, ռազմավարական ուղղությունները ներկայացնելիս՝ զեկուցողը նշեց, որ իրենց ստորաբաժանման առաջ դրված են կոնկրետ խնդիրներ: Մասնավորապես աշխատանքներ են տարվելու կրեդիտային համակարգի բարելավման, ուսումնական գործընթացի կազմակերպման

աշխատանքների արագ և պատշաճ իրականացման, ուսանողական հարցումների անցկացման, դասալսումների, դասավանդման մեթոդների կատարելագործման, համալ-սա-րան-քոլեջ-դպրոց համագործակցության ուղղությամբ:

Հանրության հետ կապի և լրատվության բաժնի պետ Պ. Մուրադյանը ներկա-յացրեց իրենց բաժնի կատարած աշխատանքները 2013-2014 ուստարվա ընթաց-քում: Դրանք եղել են բազմաբովանդակ և բազմաբնույթ, ընդգրկել են փաստաթղթաշրջանառության, նամակագրության ապահովման, լրատվական հաղորդաշարերի, դիմորդների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների, էլեկտրոնային և համացանցային կայքերի թարմացման և նորերի ստեղծման ոլորտները: Բաժնի զարգացման հայեցակարգում հիմնական ուշադրությունը դարձվել է ԳՊՀ խորհրդանշանների մշակման և հանրահռչակման, բուհի իրազեկման հայտի ստեղծման, ձևաթղթերի մշակման, ուղեցույցերի հրատարակման աշխատանքներին: Կարևորվեցին նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցների աշակերտների հյուրընկալման, ԳՊՀ 2015 թվականի օրացույցի ստեղծման, Ընտանիքի տարվան և Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված մրջոցառումների հետ կապված հարցերը:

Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեց ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Ղոնջյանի «Ժողովրդական ասութաբանության տեսակները և գաղափարաբանությունը» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը: Արժարժված հարցերի շուրջ էլույթներ ունեցան գիտխորհրդի անդամները:

Նիստի աշխատանքն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը:

Հիմք ընդունելով զեկուցումները, էլույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

- 1.ԱՔ վարչության պետ Ա. Ղարիբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կա- տարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հավանություն տալ ԱՔ վարչության՝ 2014-2015 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

3. Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի պետ Պ. Մուրադյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Հավանություն տալ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2014-2015 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

5. Երաշխավորել տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու Լ.Խ.Ղռեջյանի «Ժողովրդական ասութաբանության տեսակները և գաղափարա-բանությունը» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան